«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ինտեգրված դաս (անգլերեն - աշխարհագրություն)

ԱՌԱՐԿԱ **Անգլերեն**

ՀԵՂԻՆԱԿ Նարինե Ֆարֆարյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղարշապատի N 12 հիմն. դպրոց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, հատկապես անգլերենի դասաժամերին՝ օգտագործելով միջառարկայական կապերը: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Սույն թեմայի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կներկայացնեմ ինտեգրված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման իմ փորձը:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերականգնում համալրում,մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով,որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն աշակերտների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը: Ինտեգրված դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը:

Հետազոտման հարց - Ի՞նչ են ինտեգրված դասերը իրենցից ներկայացնում

Ընդհանրապես «**ինտեգրում**» բառը նշանակում է երկու կամ ավելի տարբեր պրոցեսների միավորում: Միևնույն ժամանակ կրթության մեջ ինտեգրված դասերը ունեն նույն նշանակությունը, քանզի ներառում են երկու կամ ավելի գաղափարներ մեկ դասապրոցեսի մեջ: Սա լավ ընդհանրացված գաղափար է, թե ինչ կարող է լինել ինտեգրված դասը՝ միևնույն ժամանակ իր մեջ ներառելով նույն գաղափարը տարբեր առարկաների միջոցով:

Տարրական դասարաններում շատ դպրոցներ արդեն վերակառուցել են իրենց ծրագրերը՝ դարձնելով բոլոր դասերը ինտեգրված: Սա արվում է թեմաներ ստեղծելու համար, որպես ակադեմիական բաժիններ, որոնք էլ ներկայացնում են ընդարձակ թեմաներ: Այս ինտեգրված բաժինները ներառում են տարրեր՝ գաղափարներ, որոնք անցնում են գլխավոր առարկաների միջոցով:

Օրինակ՝ 5-րդ դասարանի դասը կարող է ունենալ հայտնագործության թեմա: Այս թեմայով դասերը կարող են ներառել բնագիտական դաս, որը ունի հայտնագործման հիմք, պատմության դաս՝ հայտնագործողի հիմքով, լեզվի դաս, որտեղ գրում են պատմության հայտնագործության մասին, մաթեմատիկայի դաս, որտեղ ֆորմուլաների միջոցով կատարում են յուրահատուկ բացահայտում:

Այս գործընթացը շատ պարզ է ընթանում տարրական դպրոցում, քանի որ աշակերտները ունեն նույն ուսուցիչը բոլոր առարկաների համար: Եկեք մտածենք միջին և ավագ դպրոցի աշակերտի մասին, որն ունի մի քանի ուսուցիչ: Կան նաև բազմաթիվ ձևեր և բնութագրիչներ, որոնց միջոցով դասը կարող է ինտեգրվել այլ առարկայի կոնկրետ դասին: Այժմ դիտարկենք մի քանի բնութագրիչներ ինտեգրված դաս պլանավորելիս:

Ինտեգրված դասերի նշանակությունը

Ինտեգրված դասերը հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերա ցումներ ուսուցանվող նյութի մասին, ցույց տալու միջառարկայական կապերը,դրդում են սովորողներին հետազոտական գործունեության, արթնացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված դասերի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր դասերը կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված դաս անցկացնող ուսուցիչների պատրաստվածությունը, հոգեբանական համատեղելիությունը:

Բնութագրիչներ

1.**Ինտեգրված դասի** ամենակարևոր բնութագրիչը, իհարկե, պետք է խաչվի մեկ այլ առարկայի հետ: Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է, որ դու, մնալով կենտրոնացած քո առարկայի յուրահատկություններին, պետք է հաշվի առնես այլ ատարկայի ասպեկտներ: Օրինակ՝ սովորում ենք Անգլիայի աշխարհագրությունն անգլերենով՝ մանրամասնելով աշխարհագրական տեսանկյունից:

2. Եղե՛ք վստահ, որ Ձեր ինտեգրված դասը հասցեագրված է Ձեր թեմային և ներառում է տեղեկատվություն այլ առարկայից: Օրինակ՝ եթե ստանդարտ բնագիտության ժամին դուք ուսումնասիրում եք ժայռաբեկորի կազմությունը, ապա պետք է հիմնվել տվյալ օբյեկտին: Ինտեգրված դասի ասպեկտը պետք է շեշտադրված լինի

կոնկրետ և չպետք է լինեն ոչ մի տիպի շեղումներ: Երբեմն այդ շեղումները կարող են շփոթության մեջ գցել սովորողներին, կամ սովորողը կարող է կորցնել տվյալ թեման սովորելու մոտիվացիան:

ԵՎ վերջապես բոլոր ինտեգրված դասերը պետք է լինեն ստեղծագործական և ցույց տան սովորելու կարևորությունը: Դուք պետք է ունենաք հստակ հիմքեր ինտեգրված դասեր իրականացնելիս, նախապես կիսվեք այդ գաղափարով սովորողների հետ՝ բացահայտելով ինտեգրված դասի կարևորությունն ու նպատակները: Եթե սովորողը հասկանա, թե ինչու են ինտեգրվում անգլերենի և աշխարհագրության թեմաները, ապա նա ավելի լավ կհասկանա և հաճույքով կընկալի թեման: Եվ ի վերջո, պետք չէ դասը ինտեգրել անհիմն: Ինտեգրումը պետք է լինի ամենակարևոր խթանիչը թեման ներկայացնելու և ընկալելու համար:

Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Ինտեգրված ուսուցման սկզբունքները ծառայում են մեկ նպատակի՝ սովորողների մտածողության զարգացմանը: Այս խնդրի լուծման համար արդյունավետ միջոցներից մեկն է ուսուցման բովանդակության ինտեգրումը, որը նպատում է աշակերտների մոտ աշխարհի մասին ընդհանուր, ամբողջական պատկերացման ձևավորմանը: Ինտեգրումը հոգեբանամանկավարժական գրականության մեջ հասկացվում է որպես մի գործընթաց, որի միջոցով համադրվում են բոլոր ընդհանուր տարրերը, ամբողջականություն կազմող հատկությունները: Միջառարկայական կապ ստեղծելով դասին և ստանալով արդյունավետ դաս՝ ապացուցում ենք, որ չկան կարևոր և երկրորդական առարկաներ, դրանք բոլորն էլ կարևոր են, փոխկապակցված են: Ինչպես ասել է նոբելյան մրցանակի դափմեկիր Ջեյմս Ուաթսոնը. «Ոչ մի հետաքրքիր նյութ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

<u>Թեմայի նպատակները</u> - Շատ կարևոր է ճիշտ որոշել ,թե որ թեմաներից կարելի է կազմակերպել ինտեգրված դասեր, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր, և որն է մեր դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե զուտ գիտելիքների ծավալի հաղորդում:

<u>Թեմայի նշանակությունը –</u> Միջառարկայական կապերի ստեղծումը անգլերենի դասժամերին ունի բազմակողմանի նշանակություն:Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ: Նմանօրինակ դասեը արթնացնում են աշակերտների մոտ աշխույժ մոտեցում ուսուցանվող նյութին և դասաժամը միօրինակ ու ձանձրալի չի անցնում: Այսպիսով անգլերենը դառնում է հետաքրքիր և միարժամանակ հեշտ ընկալելի սովորողների կողմից:

Ինտեգրված դասերի տեսակները

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է,որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ,և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն :

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում ենմիավորված (ինտեգրված) դասերի հետևյալ տեսակները.



Ինտեգրված դասը չափազանց գրավիչ ձև է սովորողների համար, սովորողին տալիս է լիարժեք պատկերացում նյութի վերաբերյալ: Դա երկու նյութի խաչմերուկ է, որին հետևում է վերելքը, ապա գագաթը՝ նպատակային դաս: Այն սովորողներին խթանում է վերլուծելու, համեմատելու և կատարելու սեփական բացահայտումները: Այս տեսակ դասերը ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, սովորողին զարգացնել ստեղծագործական մտածողություն: Ժամանակակից դասը սերտորեն կապված է ժամանակակից տեխնոլոգիաներին այնպես, որ դասերը արդեն իսկ ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքներ: Սովորողների համար դասը ավելի հետաքրքրաշարժ է դառնում համակարգչային ուսուցման շնորհիվ:

Կարևոր հանգամանքներից մեկն այն է, որ ժամանակակից սովորողը խուսափում է տնային աշխատանք կատարելուց, կատարվածն էլ չունի արդյունավետություն: Ինտեգրված դասի նախապատրաստմանը կարելի է ներգրավել սովորողներին՝ հանձնարարելով գտնել նախապես կատարած որոշակի աշխատանք, որը սովորողը կատարում է ինքնակամ, և ոչ թե պարտավորված:Նմանատիպ աշխատանքները նպաստում են՝

ա. հմտությունների ձևավորում՝ քարտեզից օգտվելու և տեղանքին ծանոթանալու, կարողանալ ներկայացնել ՄԲ-ի աշխարհագրական դիրքը,

բ. Մշակել ճանաչողական և հետազոտական գործունեություն:

Ստորև ներկայացնում ենք ինտեգրված դասի պլան՝ անգլերենի և աշխարհագրության համակցությամբ:

Lesson Plan

Basic school N12

Subject – English Առարկա՝ աշխարհագրություն

Teacher- Farfaryan Narine Ուսուցիչ՝ Ավետիսյան

Lesson -Revision of Great Britain ԹԵՄԱ՝ «Մեծ Բրիտանիայի և Միացյալ Թագավորություն» աշխարհագրական ակնարկ: Աշխարհագրական դիրքը (ԱԴ): Բնական պամանները և ռեսուրսները: Բնակչություն

Learning objectives: by the end of the lesson pupils will be able to.

•to learn geographical information about Great Britain

•Use the map of GB

•to get information about its history and culture

•to learn about the sight of London

Նպատակը՝ Աշակերտների մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ ՄԹ-ի, ԱԴ-ի, ՏԱԺ-ի, ՔԱԴ-ի, ՏրԱԴ-ի, բնական պայմանների բազմազանության, ռեսուրս ապահովման, բնակչության ազգային-կրոնական, ռասսայական կազմերի, լեզվական կազմի, բնակչության բնական աճի տեմպերի, դրա վրա ազդող գործոնների, ուրբանիզացման մակարդակի վերաբերյալ:

Իմաստի ընկալում.
Աշակերտը պետք է իմանա.

1) Ըստ կառավարման ձևի ինչպիսի՞ պետք է ՄԹ-ը.
2) Պետք է քարտեզի վրա իմանա ՄԹ տեղը և նշի մայրաքաղաքը.
3) Պետք է իմանա վարչական առումով քանի միավորների և բաժանվում ՄԹ և ո՞վ է երկրի կառավարումն իրականացումը.
4) Պետք է իմանա կլիմայական, լեռնագրական ինչպիսի՞ առանձնահատկություններ կան այստեղ, ի՞նչ ռեսուրսներով և հարուստ ՄԹ.
5) Պետք է իմանա բնակչության ազգային, լեզվական և կրոնական կապերի առանձնահատկությունները, ուրբանիզացման մակարդակը, թվարկի մի քանի խոշոր քաղաքներ։

Methods

1. *Group Work*
2. *Think /Pair/Share*
3. *Brainstorming*
4. *mind-maping*

Material Resources

Text book
Power Point slid
Film carols about the sights
Map of the UK

Evocation

1. Work on map of the UK

2. Traveling to London sights

Madame Tussaude

Madame Tussauds is a wax museum in London; it has smaller museums in a number of other major cities. It was founded by wax sculptor Marie Tussaud in 1835. It used to be spelled as "Madame Tussaud's"; the apostrophe is no longer used. Madame Tussauds is a major tourist attraction in London, displaying the waxworks of famous and historical figures, as well as popular film and television characters played by famous actors.

Big Ben

Big Ben is the nickname for the **Great Bell** of the striking clock at the north end of the Palace of Westminster,[1] although the name is frequently extended to refer also to the clock and the clock tower.[2] The official name of the tower in which Big Ben is located was originally the **Clock Tower**, but it was renamed **Elizabeth Tower** in 2012, to mark the Diamond Jubilee of Elizabeth II.

Trafalgar Square

Trafalgar Square is a public square in the City of Westminster, Central London, established in the early 19th century around the area formerly known as Charing Cross. The Square's name commemorates the Battle of Trafalgar, the British naval victory in the Napoleonic
Wars over France and Spain that took place on 21 October 1805 off the coast of Cape Trafalgar

Buckingham Palace

Buckingham Palace is the London residence and administrative headquarters of the monarch of the United Kingdom.[a][2] Located in the City of Westminster, the palace is often at the centre of state occasions and royal hospitality. It has been a focal point for the British people at times of national rejoicing and mourning.

Piccadilly Circus

Piccadilly Circus is a road junction and public space of London's West End in the City of Westminster. It was built in 1819 to connect Regent Street with Piccadilly. In this context, a circus, from the Latin word meaning "circle", is a round open space at a street junction.

Tower Bridge

Tower Bridge is a Grade I listed combined bascule and suspension bridge in London, built between 1886 and 1894, designed by Horace Jones and engineered by John Wolfe Barry. The bridge crosses the River Thames close to the Tower of London and is one of five London bridges owned and maintained by the Bridge House Estates, a charitable trust founded in 1282. The bridge was constructed to give better access to the East End of London, which had expanded its commercial potential in the 19th century. The bridge was opened by Edward, Prince of Wales and Alexandra, Princess of Wales in 1894.

Brainstorming

Կշռադատման փուլ.

1) Ո՞րն է ՄԹ մ/ք.
2) Ո՞վ է կանգնած երկրի «գլխին».
3) Ըստ պետ. կառավարման ինչպիսի՞ երկիր է.
4) ԱԴ-ի ինչպիսի՞ առանձնահատկություններ կթվարկեք.
5) Վարչական առումով քանի՞ միավորների բաժանվում.
6) Ի՞նչ ազգերի միաձուլումից է առաջացել է «անգլիացի» ազգը (բրիտանացի).
7) Բնական աճի վրա ի՞նչ գոնծոններ են ազդում.
8) Ի՞նչ կրոնի հետևորդ են բրիտանացիները.
9) Որքա՞ն է կազմում ուրբանիզացման մակարդակը.
10) Մեկնաբանե՛լ «Թագուհին թագավորում է, բայց չի կառավարում» եզրույթը։

REFLECTION

•Watching film about the sights of London
•3 new things we have heard
• 2 new things we have learned
•1 thing we would like to know

<u>Բանալի բառեր</u>. ինտեգրում, բնութագրում, առարկայական ասպեկտներ, համագործակցություն, հոգեբանամանկավարժական։

Եզրակացություն

Այսպիսով, կատարված հետազոտական աշխատանքի շրջանակներում պարզեցինք, որ միջառարկայական կապերը հզոր խթան են հանդիսանում ոչ միայն գիտելիքի յուրացման, կարողությունների և հմտությունների ձեռք բերման, այլև՝ կայուն արժեհամակարգի ձևավորման համար: Արժեքային համակարգի ձևավորումը խիստ կարևոր է ցանկացած առարկա դասավանդելիս, դրանից անմասն չի նաև անգլերենը: Կարծում եմ, որ կիրառելով միաժամանակ ավանդական ու նոր ինտերակտիվ մեթոդները, կարելի է ապահովել բարձր արդյունավետություն ցանկացած առարկայի դասավանդման մեջ: Իսկ համադրելով միջառարկայական կապերը, կարելի է ստանալ լավագույն արդյունք: Միջառարկայական կապերը բարձրացնում են նաև աշակերտների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացումը և ստեղծում արժեքների լայն համակարգ: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույն է, փոփոխություն-ներն անխուսափելի են, որովհետև դպրոցն ու ուսուցիչը միշտ գործել են կոնկրետ արժեքային համակարգում, կոնկրետ ժամանակում և միջավայրում:

Ամփոփելով՝ հավելեմ, որ ինտեգրված ուսուցման միջոցով դասի գործընթացի կազմակերպումը մանկավարժին հնարավորություն տվեց իրականացնել նպատակաուղղված աշխատանք՝ դրդելով սովորողներին կատարել տրամաբանորեն շաղկապված գործողություններ՝ համեմատում, ընդհանրացում, համադրում, զուգորդում, դասակարգում, վերլուծում: Նշված գործողությունները ապահովեցին հաղորդվող նյութի լիարժեք ու բազմաշերտ ընկալումը՝ խորացնելով և ընդլայնելով առարկայի նկատմամբ սովորողների պատկերացումների շրջանակը, ուսուցման գործընթացը դարձնելով ավելի հետաքրքիր: Իսկ ուսուցման գործընթացի նկատմամբ հետաքրքրության առաջացումը ինքնին նպաստում է սովորողների ուսման դրդապատճառների ձևավորմանն ու զարգացմանը, որը հանդիսանում է արդի կրթական համակարգի հիմնախնդիրը:

Գրականության հղումներ.

1) Գլեյզեր և Վ.Ս. Լեդնևը բացահայտում են կրթության բովանդակության ինտեգրման ուղիները:
2) Վ.Վ Կրաևսկու, Ա. Վ. Պետրովսկի Մանկավարժության ինտեգրման խնդիրները
3) Ինտեգրված դաս և դասի պլան «Ժամանակակից նորույթներից» մեթոդիկայից
4) Что такое ИНТЕГРИРОВАНИЕ .Учебные матерялы и публикации в СМИ
5) Կրթություն և դպրոց «Օգնել ուսուցիչներին: Ինտեգրված դաս, խորհուրդներ»
6) « Ինտեգրումը կրթական գործընթացում » - Փնջոյան Տ.
7) Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան - https://hy.wikipedia.org/wiki/